ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵԹԿՊԻ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

«02» սեպտեմբերի 2015թ. նիստում

ՌԵԿՏՈՐ _____ Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԵՐԱՍԱՆԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ և ՌԵԺԻՍՈՒՐԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 << Դրասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնը ԵԹԿՊԻ-ի Թատրոնի ֆակուլտետի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթացը, ուսումնամեթոդական, հետազոտական, ստեղծագործական և կազմակերպչական աշխատանքները, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացները:

2. <<Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ԱՄԲԻՈՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 <<Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի իրավասությունները, պարտավորությունները, ինչպես նաև գործունեության սկզբունքները սահմանվում և կարգավորվում են բուհի, ֆակուլտետի և սույն կանոնադրություններով, որոնք ներառում են <<Կրթության մասին>>, <<Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները:

2.2<<Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնը՝

- կազմում է ամբիոնի աշխատողների հաստիքացուցակը՝ ելնելով կատարվող գիտամանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատանքների ծավալից ու կառուցվածքից՝ ըստ սահմանված չափանիշների,
- կազմակերպում է և անցկացնում ուսումնական պլանով նախատեսված դասախոսությունները, գործնական և անհատական պարապմունքները, կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարումն ու պաշտպանությունը, ընթացիկ և եզրափակիչ ստուգումները,
- իրականացնում է ամբիոնի դասընթացների ուսումնական ծրագրերի պատրաստումն ու նորացումը՝ գործող ուսումնական պլանին համապատասխան,
- կազմակերպում է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ցուցումների և այլ ուսումնաօժանդակ նյութերի պատրաստումն ու հրատարակումը,
- ապահովում և ղեկավարում է ստեղծագործական աշխատանքների կատարումը, կազմակերպում ավարտված աշխատանքների քննարկումը և երաշխավորում ցուցադրության, հրատարակության,
- քննարկում և հաստատում է դասախոսների անհատական պլանները, առարկայական նկարագրերը /օրացուցային պլան/,
- կազմակերպում է դասալսումներ, տարածում լավագույն դասախոսների փորձը, օգնում սկսնակ դասախոսներին,
- պայմաններ է ստեղծում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և գիտամանկավարժական կադրեր պատրաստելու համար,
- աջակցում է /կազմակերպում է/ ստեղծագործական բնույթի աշխատանքների, մրցույթների, փառատոների կազմակերպմանը,
- քննարկում է դրսից ստացված ատենախոսությունները, դասագրքերը, մենագրությունները,

- ապահովում է ամբիոնի աշխատակազմի բնականոն և արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ,
- ներկայացուցիչներ է առաջադրում ֆակուլտետի խորհրդում, ուսումնամեթոդական խորհրդում, գիտական խորհրդում:

3. <<Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. <<Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնը թողարկող ամբիոն է.
- ստեղծված է դրամ. թատրոնի և կինոյի դերասանների և ռեժիսորների մասնագիտությունների բարձրորակ կադրերի պատրաստման ողջ գործընթացը կազմակերպելու նպատակով՝ ուսումնառության սկզբից մինչև բարձրագույն կրթությամբ մասնագետների թողարկումը,
- իրականացնում է ուսումնական պլանների վերանայում, նոր ուսումնական պլանների մշակում և քննարկում, առարկայական ծրագրերի կազմում, ստեղծագործական մրցույթների կազմակերպում, համակարգում և վերահսկում է իր առարկայական ծրագրերի մշակումը և դասավանդումը,
- կազմում է կուրսային, ավարտական աշխատանքների թեմաների և բեմադրությունների ցանկը և ներկայացնում դեկանի հաստատմանը, կազմակերպում և իրականացնում է այդ աշխատանքների ղեկավարումն ու պաշտպանությունը,
- համակարգում է տվյալ մասնագիտության բոլոր կուրսերում իրականացվող մեթոդական, ուսումնադաստիարակչական աշխատանքները,
- վերահսկում է դասավանդման որակը և դասախոսների միջոցով հսկողություն իրականացնում ուսանողների հաճախումների նկատմամբ,
- վերահսկում է մասնագիտությունների հաստատված կրթական չափորոշիչների պահանջների կատարման ընթացքը,

- կազմակերպում է ստեղծագործական հանդիպումներ, մրցույթներ, վարպետության դասեր, դիտումներ,
- կազմակերպում է ստուգարքներ և քննություններ:

3.3 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >>ամբիոնը պետք է ունենա՝
- աշխատանքային, ուսումնական, ստեղծագործական մեթոդական-կազմակերպչական աշխատանքների տարեկան պլաններ,
- ժամահաշվարկ և տարեկան ուսումնական բեռնվածք,
- նիստերի արձանագրություններ,
- դասախոսների հաշվետվություններ,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցեր,
- ամբիոնում դասավանդվող առարկաների գործող ուսումնամեթոդական, գիտամանկավարժական ուսումնական ծրագրեր,
- ուսումնական գործընթացն ապահովող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ /դասընթացների ուղեցույցներ, ուսանողների առաջադիմությունն ապահովող և վերահսկող այլ նորմատիվային փաստաթղթեր/:

3.4 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի գործունեությունը վերահսկվում է Թատրոնի ֆակուլտետի դեկանի կողմից:

4. << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի կառավարումը

4.1 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >>ամբիոնի կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման զուգակցման սկզբունքով: Ամբիոնը ուսումնագիտական, կրթական, ստեղծագործական և այլ կարևոր հարցերի քննարկման և խնդիրների լուծման համար առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է ամբիոնի նիստ, որը ղեկավարում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի գիտամեթոդական, ուսումնական, ստեղծագործական հիմնական

հարցերը քննարկվում են ամբիոնի գիտամանկավարժական կազմի նիստերում: Ամբիոնի նիստի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ բաց կամ փակ քվեարկությամբ /քվեարկության ձևը որոշվում է ամբիոնի նիստում/: Ամբիոնի նիստն իրավազոր է ամբիոնի կազմի 2/3-ի առկայության դեպքում:

4.2 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի արտահերթ նիստեր կարող են գումարվել ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, պրոռեկտորի կամ ռեկտորի նախաձեռնությամբ, ինչպես նաև ամբիոնի ձայնի իրավունք ունեցող կազմի 2/3-ի պահանջով:

4.3 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >>ամբիոնը ղեկավարում է վարիչը, ով ընտրվում է մրցութային հիմունքներով մինչև 5 տարի ժամկետով՝ ամբիոնի նիստի երաշխավորությամբ, ինստիտուտի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ապա նշանակվում է ռեկտորի հրամանով և կնքվում աշխատանքային պայմանագիր:

4.4 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնն իրավասու է ձայների 2/3-ով ֆակուլտետի դեկանին առաջարկություն ներկայացնել ամբիոնի վարիչի պարտականությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

4.5 Ամբիոնի վարիչը՝

- կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնագիտական, ստեղծագործական և այլ աշխատանքները,
- հաշվետու է ամբիոնին, դեկանին, ֆակուլտետի խորհրդին, ռեկտորին /պրոռեկտորին/,
- ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետում և ֆակուլտետից դուրս,
- մասնակցում է բուհում ամբիոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը,
- վարում է ամբիոնի նիստերը՝ որպես նախագահ,
- ի պաշտոնե հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի, ռեկտորատի, ինստիտուտի գիտական խորհրդի անդամ,

- կազմում է ամբիոնի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը և սահմանված ժամկետում ներկայացնում դեկանի և պրոռեկտորի հաստատմանը,
- իրականացնում է դասաժամերի և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում դրանց կատարման ժամկետներն ու որակը,
- հաստատված կրթական չափորոշիչներին համապատասխան կազմակերպում է ուսումնական գործընթացը, պլանավորում ու ղեկավարում է ամբիոնի ուսումնամեթոդական և ստեղծագործական աշխատանքներն ու առարկայական ծրագրերի կազմումը, մասնակցում է մասնագիտությունների ուսումնական պլանների կազմման աշխատանքներին,
- կատարում է դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկումն ամբիոնի նիստում,
- ամբիոնի նիստում առաջարկություններ է ներկայացնում ամբիոնում առկա պրոֆեսորադասախոսական թափուր տեղերի տեղակալման, պաշտոնում առաջքաշման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և պայմանագրերի վերակնքման վերաբերյալ,
- առաջարկություններ է ներկայացնում դեկանին, պրոռեկտորին, ռեկտորին ամբիոնում պրոֆեսորադասախոսական նոր պաշտոնների ստեղծման վերաբերյալ,
- Թատրոնի ֆակուլտետի դեկանի, պրոռեկտորի, ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, ստեղծագործական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանը և ներկայացնում տարեկան հաշվետվություն դրանց կատարման վերաբերյալ,
- կազմակերպում է գիտամանկավարժական կադրերի պատրաստման, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացը,

- իրականացնում է վերահսկողություն և կրում պատասխանատվություն ամբիոնում ուսումնական, մեթոդական, ստեղծագործական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու որակի, ներքին կարգուկանոնի և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար,
- նախաձեռնում և ամբիոնի աշխատակիցներին ներկայացնում է պարգևատրման, խրախուսման, ինչպես նաև կարգապահական տույժի:

5. ԴԵՐԱՍԱՆԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ և ՌԵԺԻՍՈՒՐԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ԿԱԶՄԸ

5.1 Ամբիոնի կազմում ընդգրկվում են պրոֆեսորները, դոցենտները, մագիստրոսներն ու դասախոսները, ինչպես նաև ուսումնաօժանդակ անձնակազմը:

5.2 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, ինչպես նաև ամբիոնի անդամների և ինստիտուտի միջև աշխատանքային հարաբերությունները իրականացվում և կարգավորվում են պայմանագրային հիմունքներով:
Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր տեղերի համալրումը կատարվում է ինչպես մրցույթի միջոցով, այնպես էլ պայմանագրային հիմունքներով:
5.3 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը՝

- իրականացնում է զբաղեցրած պաշտոնին և մասնագիտությանը համապատասխան ուսումնամեթոդական և ստեղծագործական աշխատանքներ,

- մշտապես կատարելագործում է տեսական գիտելիքները, գործնական փորձը, ուսումնական աշխատանքների մեթոդները, մասնակցում է

գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործընթացին, հրատարակում է ուսումնական նյութեր,

- ղեկավարում է ուսանողների ստեղծագործական աշխատանքները,

- իրականացնում է երիտասարդության ազգանվեր, քաղաքացիական դաստիարակություն:

5.4 << Դերասանի վարպետության և ռեժիսուրայի >> ամբիոնի ուսումնաօժանդակ աշխատակազմը՝

- ժամանակին և պատշաճ մակարդակով կատարում է հանձնարարված աշխատանքները,
- լսարաններում, աշխատասենյակում և դահլիճներում պահպանում է կարգուկանոն, սարքավորումներն ու հարմարանքները պահպանում սարքին վիճակում,
- միջոցներ է ձեռնարկում անհապաղ վերացնելու աշխատանքների ընթացքը խոչընդոտող կամ դժվարեցնող պատճառներն ու պայմանները և այդ մասին տեղեկացնում է ամբիոնի ղեկավարությանը,
- պահպանում է աշխատանքի, տեխնիկայի անվտանգության, ուսումնական գործընթացի սանիտարահիգիենիկ և հակահրդեհային կանոնները:

5.5 Ամբիոնի ողջ անձնակազմը պարտավոր է իր գիտամանկավարժական և աշխատանքային գործունեությունն իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության, ինստիտուտի, ֆակուլտետի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

6. ԴԵՐԱՍԱՆԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ և ՌԵԺԻՍՈՒՐԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Ամբիոնի ստեղծումը, վերակազմակերպումը /միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում/ և լուծարումը կատարվում է գիտական խորհրդի որոշմամբ: